Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԻՏԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄԸ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Արդի փիլիսոփայական, տրամաբանական-մեթոդաբանական գրականության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում անդրադարձման՝ որպես իրականության ճանաչողության եղանակի, նրա կառուցվածքային առանձնահատկությունների, փիլիսոփայական և գիտական իմացության գործընթացում նրա կողմից իրականացվող ֆունկցիաների վերլուծության պրոբլեմը։ Այդ է վկայում ոչ միայն իմացության ամենատարբեր բնագավառներում տվյալ հասկացության լայն տարածման և օգտագործման փաստը, այլև շատ գիտությունների ներկայացուցիչների՝ փիլիսոփաների, մաթեմատիկոսների և ուրիշների ձգտումը՝ համակողմանիորեն մշակել գիտական և փիլիսոփայական անդրադարձման պրոբլեմը[1]։

Հայրենական գրականության մեջ գիտական և փիլիսոփայական անդրադարձման հիմնորոշ պրոբլեմների պարզորոշման առավել տարածված տեսակետներից մեկն այն է, ըստ որի «...գիտական անդրադարձումը տեսական գիտելիքի վերլուծությունն ու քննադատությունն է այն մեթոդների ու հնարքների պարզեցման ու կիրառման հիման վրա, որոնք հատուկ են գիտական ուսումնասիրության տվյալ բնագավառին, փիլիսոփայական անդրադարձումը՝ ամբողջությամբ վերցրած, մարդկային մշակույթի, կեցության ու մտածողության սահմանային հիմքերի գիտակցումն ու իմաստավորումն է»[2]։

Դժվար չէ տեսնել, որ անդրադարձումը՝ որպես աշխարհի գիտական յուրացման եղանակ, անմիջականորեն կապված է գիտության կոնցեպտուալ հիմքի, գիտական և փիլիսոփայական գիտելիքի կոնցեպտուալացման պրոբլեմի հետ, քանի որ գիտելիքի քննադատական վերլուծությունը, գիտական իմացության մեթոդների ու հնարքների որոշարկումը, աշխարհի գիտական պատկերի, ինչպես նաև աշխարհայացքային դիրքորոշումների ամբողջական իմաստավորումն անհնար է առանց այդպիսի վերլուծության։

Այստեղ մենք, նախքան բուն «անդրադարձում» հասկացության ճանաչողական ֆունկցիաների վերլուծությանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում տալ պատմափիլիսոփայական ակնարկ։

Հանրահայտ է, որ անտիկ փիլիսոփայության հիմնարար պրոբլեմը աշխարհի ողջ իրային բազմազանությունն առաջացնող նախասկզբի պրոբլեմն էր, որն իրականության առասպելաբանական բացատրությունից բանական մտածողությանն անցման պատմական կարևորագույն քայլ էր։

Հետագայում բանական մտածողության զարգացումը, օբյեկտիվ աշխարհի մասին կոնկրետ գիտական գիտելիքների կուտակումը, վերլուծական մեթոդների ներթափանցումը անտիկ բնափիլիսոփայության մեջ պարարտ հող են ստեղծում փիլիսոփայական և մասնավոր գիտական գիտելիքների սահմանազատման համար։ Հատկանշական է, որ հատուկ գիտական և փիլիսոփայական գիտելիքների կազմավորման գործընթացն անխուսափելիորեն ուղեկցվում էր անդրադարձման, որպես գիտելիքների ստացման միասնական եղանակի, երկատմամբ՝ փիլիսոփայական և գիտական անդրադարձման եղանակների առանձնացմամբ։

Նոր ժամանակներում, երբ վերջնականորեն ձևավորվեցին ժամանակակից գիտական մեթոդի հիմնորոշ բնութագծերը, առանձնահատուկ կերպով կարևորվեց զգայորեն տրվածի, աշխարհի պատկերի անդրադարձման պրոբլեմը։ Փիլիսոփայական այդ նոր դիրքորոշումը վճռականորեն հաղթահարելով անդրադարձման միջնադարի քրիստոնեական, աստվածաբանական ավանդույթների շրջանակները, ուղի հարթեց նոր ժամանակների փիլիսոփայության ճանաչողական «տարածքի»՝ նրա նոր պրոբլեմների սահմանազծման համար։ Դա իր իտացված արտահայտությունը գտավ գիտելիքի կայուն, հավաստի հիմքերի ինտենսիվ որոնումների մեջ, որոնք նախաձեռնել էին նոր ժամանակների մտածողները։ Դա նախադրյալներ ստեղծեց անդրադարձման էության, նրա ճանաչողական ֆունկցիաների սահմանազատման համար։

Պատմության մեջ առաջին անգամ հստակ իմացաբանական նախադրյալներ ստեղծվեցին անդրադարձման տարբեր՝ գիտական, փիլիսոփայական, առօրեական և այլ մակարդակների ավելի հստակ ըմբռնման համար։

Ռենե Դեկարտը՝ նոր ժամանակների ռացիոնալիզմի նախահայրը, գտնում էր, որ հավաստի գիտելիքի հնարավորությունը պայմանավորված է որոշ բնածին գաղափարների (հոգևոր ու նյութական սուբստանցիայի և այլն) գոյությամբ։ Այդ գաղափարներին մարդը հասու է դառնում անդրադարձման օգնությամբ։ Նկատենք, որ անդրադարձման կապը

գիտելիքի հիմնավորման պրոբլեմի հետ որոշակիորեն արտահայտվել է Ջ. Լոկի, Գ. Լայբնիցի, Է. Կանտի աշխատություններում։

Ըստ Լոկի, անդրադարձումը միայն ինքնաճանաչողության մեթոդ չէ։ Նա անդրադարձումը, որոշ իմաստով, հակադրում է զգայական փորձին (պրակտիկային)։ Սակայն Լոկին առավելապես հետաքրքրում է աշխարհի մասին մեր գիտելիքների հավաստիության պրոբլեմը։ Անդրադարձման օգնությամբ վերլուծվում ու համակարգվում են զգայական փորձի տվյալները։ Փորձ է արվում գտնելու զգայորեն տրվածի «օբյեկտիվացման» ուղիները։ Ակնհայտ է, որ անդրադարձման նման ըմբռնումը մատերիալիստորեն է կողմնորոշում գիտելիքի կոնցեպտուալ հիմքի տեսական վերլուծությունը։

Տեղին է նշել, որ եթե Լոկի մոտ անդրադարձումն աչքի է ընկնում հարաբերական ինքնուրույնությամբ և հիմնվում է զգայական փորձի վրա, ապա Լայբնիցի մոտ անդրադարձումը օժտված է լրիվ ինքնուրույնությամբ։ Ըստ նրա, մոնադաների ընկալունակությունը, ի վերջո, պայմանավորված է պատրաստի գիտելիքի աշխարհի ինքնուրույն գոյությամբ և մտքի, որպես ակտիվ նախասկզբի, անդրադարձնող գործունեությամբ։

Անդրադարձման ներառկա ըմբռնմանը բավականին մոտ է Ի. Կանտի կոնցեպցիան։ «Անդրադարձումը մեր իմացության տարբեր աղբյուրների նկատմամբ տվյալ պատկերացումների հարաբերության գիտակցումն է, և միայն որի շնորհիվ էլ հենց նրանց միջև եղած հարաբերությունը կարող է ճիշտ որոշվել։ Մինչ հետագայում մեր պատկերացումներին դիմելը, մենք պետք է լուծենք այն հարցը, թե ամբողջությամբ վերցրած, դրանք ո՞ր ճանաչողական ընդունակություններին են պատկանում, թե ի՞նչն է նրանց մեկը մյուսին կապում կամ մեկը մյուսի հետ համեմատում՝ բանախոհությունը, թե՞ զգայականությունը»[3]։

Այս հարցադրումների լուծումը սերտորեն կապված է գիտելիքի տրվյալ բնագավառի կոնցեպտուալ հիմքի փիլիսոփայական վերլուծության հետ։ Բնութագրելով անդրադարձման առանձնահատկությունները, Կանտը հատուկ շեշտում է, որ «Անդրադարձումը (reflexio) ոչ մի գործ չունի բուն առարկաների հետ, որպեսզի հասկացություններն ուղղակիորեն դրանցից ստանա. այն հոգու այնպիսի վիճակ է, որի մեջ մենք, նախ և առաջ, փորձում ենք գտնել այն սուբյեկտիվ պայմանները, որոնց դեպքում կարող ենք կազմավորել հասկացություններ»[4]։

Հետաքրքիր է նկատել, որ քննարկվող պրոբլեմների հետ սերտորեն կապված են անդրադարձման կանտյան ըմբռնման հետևյալ մակարդակ-

ները։ Հատկանշական է, որ եթե տրանսցենդենտալ անդրադարձումը, ինչպես մենք ցույց տվեցինք, կապված է գիտելիքի կոնցեպտուալ հիմքի տրամաբանական-փիլիսոփայական վերլուծության հետ, ապա տրամաբանական անդրադարձումն անմիջականորեն կապված է կոնցեպտուալացման պրոբլեմի հետ. «Եթե մենք զբաղվում ենք միայն տրամաբանական անդրադարձումով, ապա մենք դատողության մեջ իրար հետ համեմատում ենք միայն մեր հասկացությունները, որպեսզի պարզենք, թե դրանք ունե՞ն միևնույն բովանդակությունը, հակասու՞մ են արդյոք մեկը մյուսին, թե՞ ոչ, հասկացության մեջ ներքնապես ինչ-որ մի բան բովանդակվո՞ւմ է, թե՞ դրսից է նրան միացվում, ինչպես նաև մենք փորձո՞ւմ ենք պարզել, թե երկու հասկացություններից ո՞ր մեկը պետք է համարել տրված, իսկ որ մեկը՝ միայն այն եղանակը, որով մտածվում է տվյալ հասկացությունը»[5]։

Վերը շարադրանքից ակնհայտորեն բխում է, որ նոր ժամանակներում անդրադարձման պրոբլեմի նորովի ըմբռնումը սերտաճած է աշխարհի գիտական պատկերի ու գիտության նոր կոնցեպցիային։ Մտածողության նոր աճն անխուսափելիորեն իր հետ բերում է գիտական և փիլիսոփայական անդրադարձման պրոբլեմի նոր իմաստավորում, որի կարևոր հայտանիշներից է այն, որ գիտական անդրադարձումը, կապված լինելով իրականության զգայական պատկերների գործառման հետ, միաժամանակ հետազոտողին հնարավորություն է ընձեռում կանխատեսելու «երևակայական»՝ էմպիրիկորեն չդիտարկվող իրավիճակներ, պարզորոշելու նշված պրոբլեմի կոնցեպտուալ ապահովման ընդհանուր ուղիները և այլն։

Ինքնին հասկանալի է, որ անդրադարձումը կարող է իրականացվել և արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե բնափորձի արդյունքների վերլուծությունն ու ընդհանրացումն անհրաժեշտաբար ուղեկցվի այդ արդյունքները խորապես իմաստավորող կոնցեպտուալ հիմքի (ելակետային տեսական պատկերացումների, սկզբունքների, կոնցեպտուալ մոդելի և այլն) կառուցմամբ։ Ակնհայտ է, որ անդրադարձումը գործառում է որպես առկա կոնցեպտուալ հիմքի, նրա հնարավոր փոխակերպումների, աշխարհի կոնցեպտուալ պատկերի զարգացման վճռորոշ միջոցներից մեկը։

Գիտական անդրադարձման էության նկատմամբ մեթոդաբանական այդ նոր դիրքորոշումը աստիճանաբար դարձավ տիրապետող ոչ միայն բնագիտության մեթոդաբանների, այլև մաթեմատիկոսների ու ֆիզիկոսների համար։ Կ. Գաուսի, Ն. Ի. Լոբաչևսկու, Բ. Ռիմանի, Հ. Հելմհոլ-

ցի, Ֆ. Կլեյնի և Հ. Պուանկարեյի հետազոտությունները երկրաչափության կոնցեպտուալ հիմքերի, ինչպես նաև XIX դ. վերջի և XX դ. սկզբի սահմանագծում տեսական բնագիտության զարգացումը որակապես նոր աղդակ ծառայեցին գիտական և փիլիսոփայական անդրադարձման էության, ճանաչողական ֆունկցիաների բացահայտման ու դասակարգման գործում։ Այդ հետազոտությունների արդյունքները հավաստեցին, որ բնագիտական և փիլիսոփայական իմացության բնագավառներում անդրադարձումը խիստ կարևոր է ոչ միայն զուտ էմպիրիկ եղանակով ձեռք բերված գիտելիքի կոնցեպտուալ մոդելների, այլև ինդուկտիվ այլ եղանակով ձեռք բերված մոդելների փիլիսոփայական և տրամաբանական-մաթեմատիկական ընդհանրացման հիմքի վրա կազմավորվող կոնցեպտուալ կառույցների նկատմամբ։

Հավաստվեց և այն, որ կոնցեպտուալ համակարգերը, որոնք կարող են կատարել աշխարհի բնագիտական պատկերի հասկացական-կատեգորիական հիմքի դեր, կարող են ստեղծվել նաև փորձարարական գործունեության արդյունքներից անկախ ու զատ։ Անդրադառնալով արդի գիտության այդ առանձնահատկության վերլուծությանը, Ա. Էյնշտեյնը նշում է, որ ժամանակակից ֆիզիկոսը «տեսության որոնումներում ավելի մեծ չափով ղեկավարվում է զուտ մաթեմատիկական, ձևական նկատառումներով, քանի որ փորձարարի ֆիզիկական փորձը հնարավորություն չի ընձեռում ուղիղ բարձրանալ բարձրագույն վերացականության ոլորտները։ Առավելապես ինդուկտիվ մեթոդների տեղը, որոնք հատուկ են գիտության պատանեկան շրջանին, զբաղեցնում է որոնողական դեդուկցիան»[6]։ «Որոնողական դեդուկցիան»՝ որպես գենետիկական-կառուցողական մեթոդի տարատեսակություն, ըստ էության, նույնական է գիտական անդրադարձմանը՝ իր ընդլայնողական իմաստով։

Այսպիսով, գիտական և փիլիսոփայական անդրադարձման ճանաչողական ֆունկցիաների գործառումը նպատակաուղղված է գիտության կոնցեպտուալ ապարատի կատարելագործմանն ու զարգացմանը, գիտության տվյալ կոնցեպտուալ հիմքի վրա կառուցվող աշխարհի գիտական պատկերի մշակմանը, գիտության ներկառուցվածքային՝ տրամաբանական-մաթեմատիկական կախվածությունների բացահայտմանն ու համակողմանի վերլուծությանը և այլն։

Առանձնահատուկ պետք է ընդգծել այն, որ անդրադարձման պրոբլեմի դիալեկտիկամատերիալիստական մեկնակերպն ամբողջովին ելնում է արտացոլման և մարդու առարկայական-պրակտիկ գործունեության միասնության հիմնարար դրույթից։

Հայտնի է, որ դեռևս մարքսիզմի դասականները քննադատելով իրական հասարակական մարդու կեցությունը սոսկ ինքնագիտակցությանը հանգեցնելու իդեալիստական փորձերը, միաժամանակ, գաղափարախոսական հիմք ստեղծեցին գիտական գիտելիքի կազմավորման, գործառման ու զարգացման գործընթացների վերլուծության տրամաբանական-մեթոդաբանական և աշխարհայացքային մակարդակի ապահովման համար։ Մարքս-լենինյան հանրահայտ դրույթն ասում է, որ մարդկային իմացությունը՝ որպես իրականության արտացոլման բարձրագույն ձև, ենթադրում է ոչ միայն սուբյեկտի գիտակցական վերաբերմունք օբյեկտի նկատմամբ, այլև այն բանի խոր գիտակցում, որ սուբյեկտն օբյեկտիվ իրականության մասին գիտելիքի և՛ կրողն է, և՛ ստեղծողը։ Ինչպես համոզիչ կերպով ցույց է տվել Վ. Ի. Լենինն իր «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունում՝ իմացության մատերիալիստական տեսությունը, որպես գիտելիքի նկատմամբ անդրադարձման հատուկ տեսակ, բացահայտում է ամեն տեսակի իմացության անհրաժեշտ ու համապարտադիր պայմանները, առանձնացնում է համընդհանուր իմացաբանական նորմաները։

Ինչ խոսք, գիտելիքի կոնցեպտուալ հիմքի կառուցման գործուն միջոցներից է գիտափիլիսոփայական անդրադարձումը։ Մեր օրերում, երբ արդի գիտատեխնիկական հեղափոխության հետևողական ծավալումն ու զարգացումն էլ ավելի են հրատապ դարձնում գիտափիլիսոփայական անդրադարձման ուսումնասիրության խնդիրը, անհրաժեշտ է ավելի լայնորեն հիմնվել մարքսիզմ-լենինիզմի դասականների տեսական-մեթոդաբանական ժառանգության վրա։

Այս առումով առանձնահատուկ կարևորվում են՝ վերացականից կոնկրետին անցման մեթոդի դիալեկտիկամատերիալիստական ըմբռնման զարգացումը Կ. Մարքսի կողմից[7], Ֆ. Էնգելսի սկզբունքային դրույթը՝ հիպոթեզի՝ որպես գիտական գիտելիքի զարգացման հիմնական եղանակի, ինդուկցիայի, դեդուկցիայի, վերլուծության՝ որպես գիտելիքի վերացական օբյեկտի կառուցման եղանակների մասին[8] և այլն։ Կարևորվում են նաև լենինյան հիմնարար գաղափարները էության և երևույթի իմացության դիալեկտիկայի[9], «կենդանի հայեցողության», վերացական մտածողության և պրակտիկայի դիալեկտիկական փոխկապվածության[10], գիտական հետազոտության գործընթացում ֆանտազիայի դերի[11] մասին։

Արտացոլման դիալեկտիկական մատերիալիստական տեսության հետագա զարգացման գործում զգալի ավանդ ունեն սովետական հայտնի փիլիսոփաներ Լ. Բ. Բաժենովը, Վ. Ս. Բիբլերը, Բ. Վ. Բիրյուկովը, Գ. Ա.

Բրուտյանը, Դ. Պ. Գորսկին, Մ. Վ. Պոպովիչը, Վ. Ս. Ստյոպինը, Վ. Ս. Շվիրյովը և ուրիշներ։

Մեր օրերում առանձնահատուկ նշանակություն է տրվում փիլիսոփայության լեզվակառուցվածքում տեղի ունեցող կոնցեպտուալ փոփոխությունների իմացաբանական վերլուծությանը։ Գ. Ա. Բրուտյանը ընդգծում է, որ «Դիալեկտիկական մատերիալիզմի համար... առանձնահատուկ նշանակություն է ստանում նրա լեզվի պրոբլեմների նրբին ու առավել լրիվ մշակումը։ Դիալեկտիկական մատերիալիզմի լեզվի սեմանտիկայի առումով, առանձնահատուկ կարևոր նշանակություն է ձեռք բերում նրա համակարգի մեջ մտնող նոր հասկացությունների չափանիշների մշակումը»[12]։ Իրավացիորեն նշվում է և այն մասին, որ խոսքը վերաբերվում է ոչ միայն համագիտական հասկացություններին, որոնք գիտության զարգացման և փիլիսոփայության հետ նրա փոխգործողության ներազդման շնորհիվ փիլիսոփայության կողմից յուրացվում են, այլև այն կոնցեպտներին, որոնք արդի սոցիոմշակութային իրականության նոր պրոցեսների և դրանց փիլիսոփայական իմաստավորման ընթացքում ներառվում են դիալեկտիկական մատերիալիզմի լեզվակառուցվածքի մեջ[13]։

Հարկ է նկատել որ մեթոդաբանական կարևորություն ունեցող այս հարցերի համախմբի ուսումնասիրության հրատապությունը թելադրվում է բուն փիլիսոփայության զարգացման ներքին պահանջներով։ Այդ ուսումնասիրություններն էապես խթանվում են արդի բնագիտական հետազոտությունների պրակտիկայի զարգացման, տեսական մտածողության ոչ դասական մեթոդների ու ձևերի հետագա մշակման անհրաժեշտությամբ։

Անդրադառնալով այդ պրոբլեմներին, Վ. Ս. Շվիրյովը նշում է, որ արդի գիտության զարգացման գլխավոր ուղղությունը խտացված արտահայտվում է, նրանում, որ գիտության մեջ «աճում և ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում գիտելիքների այն շերտը, որը չունի իր ուղղակի անմիջական համահարաբերականը, անմիջականորեն կապված չէ դիտումների ու փորձի մակարդակի հետ։ Այդ շերտին վերաբերող գիտելիքների ձևավորումն ու զարգացումը նշանակալից չափով տեղի է ունենում էմպիրիայից անկախ»[14]։

Բնութագրելով արդի գիտության գործառման ու զարգացման հիմնորոշ միտումները, անհրաժեշտ է ըստ ամենայնի ընդգծել այն կարևոր հանգամանքը, որ աշխարհի գիտական իմացության մեթոդների զինանոցը չի սահմանափակվում միայն զուտ տեսական մտակառույցների մշակման մեթոդներով և այդ մտակառույցների նկատմամբ անդրադար-

ձումով։ Միաժամանակ, ինքնին ակնհայտ է, որ արդի գիտության էմպիրիկ հիմքի մասին ավելի համարժեք պատկերացում կազմելու նպատակով, անհրաժեշտ է անընդհատ կատարելագործել գիտական գիտելիքի համակարգերն ու կոնցեպտուալ մտակառույցները, խորացնել և զարգացնել նրա նկատմամբ գիտական և փիլիսոփայական անդրադարձման մեթոդները։

Վերը շարադրանքից կարելի է հանգել այն եզրակացության, որ գիտելիքի կոնցեպտուալ հիմքերի որակական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, դրանց ընդհանրացումն ու էվրիստիկաճանաչողական հնարավորությունների բացահայտումը սերտորեն կապված են անդրադարձման կոնցեպցիայի փիլիսոփայական պատկերացման հետ։

Հարկ է նշել և այն մասին, որ, աշխարհայացքային առումով, անդրադարձման կոնցեպցիայի, կոնցեպտուալացման և գիտելիքի հիմնավորման պրոբլեմի փոխհարաբերության դիալեկտիկամատերիալիստական վերլուծության հրատապությունը թելադրում է նաև գիտական գիտելիքի զարգացման մեխանիզմների վերաբերյալ տարատեսակ իդեալիստական մեկնաբանությունների քննադատական իմաստավորման անհրաժեշտությամբ։

Ետպոզիտիվիզմի ներկայացուցիչների (Թ. Կոն, Կ. Պոպեր, Ի. Լակատոս, Պ. Ֆեյերաբենդ և ուրիշներ) կողմից զարգացված այդ մեկնաբանությունների քննադատական վերլուծությունը համոզիչ կերպով վկայում է այն մասին, որ դրանք ոչ այնքան պատմականորեն զարգացող իրական գիտության կառուցվածքում կատարվող կոնցեպտուալ փոփոխությունների նկատմամբ փիլիսոփայական անդրադարձի, որքան արդի գիտության նկատմամբ մտահայեցողական սպեկուլյացիաների, նրա զանազան, հաճախ խիստ կամայական, «վերակառուցումների» արդյունքն են։

Վ. Ա. Լեկտորսկու, Ս. Ռ. Միկուլինսկու, Վ. Ս. Շվիրյովի և ուրիշ սովետական փիլիսոփաների աշխատություններում փաստարկված կերպով ցույց է տրված, որ ետպոզիտիվիստներն, առաջադրելով գիտության մեջ տեղի ունեցող կոնցեպտուալ փոփոխությունների պրոցեսի «անարխիստական», «հեղափոխական» և այլազան մեկնաբանությունները, հաճախ իրենց, «փիլիսոփայական անդրադարձումներում» ուսումնասիրում են այն, ինչը իրականում գոյություն չունի։ Բանն այն է, որ ետպոզիտիվիստները հաճախ կառուցում են գիտության այնպիսի մտահայեցական մոդելներ, որոնք լիովին համապատասխանելով իրենց փիլիսոփայական ուսմունքների գոյաբանական, իմացաբանական և աշխարհայացքային

դիրքորոշումներին, միաժամանակ, հոգ չեն տանում այդ մոդելները արդի գիտության իրական վիճակի հետ համադրելու, դրա հիման վրա համակողմանիորեն ստուգելու մասին։

Ակնհայտ է, որ գիտության կոնցեպտուալ հիմքի նկատմամբ փիլիսոփայական անդրադարձման ընդհանուր իմացաբանական արդյունավետությունը հնարավոր է ըստ ամենայնի ապահովել միայն մշակույթի պատմության դիալեկտիկամատերիալիստական ըմբռնման շրջանակներում։ Գիտությունը՝ որպես հոգևոր մշակույթի անհրաժեշտ բաղադրամաս, արտացոլելով մարդկային գործունեության հոգևոր ու գործնական կողմերը, դիալեկտիկորեն փոխում է՝ ա) նրանում ձևավորված կոնցեպտուալ հիմնահիմքը, բ) նրա հիման վրա առաջացած նկարագրման, բացատրման ու կանխատեսման եղանակը, և, վերջապես, գ) այդ հիմնահիմքի վրա զարգացող աշխարհի կոնցեպտուալ պատկերը։ Հենց գիտական և փիլիսոփայական իմացության կախվածությունը հասարակության նյութական և հոգևոր կենսագործունեության իրական պահանջմունքներից, այլ ոչ թե իռացիոնալ և կամայական գործոններից (որոնք Թ. Կունը առաջադրում է որպես «հարացույցի» հաջորդափոխության հիմք), կարող է ապահովել գիտական իմացության համակարգում տեղի ունեցող կոնցեպտուալ փոփոխությունների համարժեք, միակ գիտական բացատրությունը։

Այս առումով մարքս-լենինյան մեթոդաբանության կարևորագույն պահանջներից մեկն էլ այն է, որ գիտությունն ու փիլիսոփայությունը որպես հոգևոր գործունեության եղանակներ, սերտորեն կապակցված են սոցիալական, քաղաքական և գաղափարախոսական գործոնների հետ։ Ավելին, մեծապես ներազդում են կոնցեպտուալ հիմքերի ձևավորմանը, գործառմանն ու զարգացմանը։ Առանց գիտության պատմահասարակական բնույթի մասին դրույթն ընդունելու, առանց դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերից հասարակության կենսագործունեության նյութական և հոգևոր կողմերի անքակտելի միասնությունն ուսումնասիրելու, հնարավոր չէ բացահայտել արդի գիտության կառուցվածքում տեղի ունեցող կոնցեպտուալ փոփոխությունների մեխանիզմների գործառման ու զարգացման օրինաչափությունները։ Գիտության կոնցեպտուալ մոդելների նկատմամբ իրականացվող բոլորատեսակ անդրադարձները, որոնք, ըստ էության, անտեսում են նրա պատմահասարակական բնույթը, անխուսափելիորեն գիտության իսկական փիլիսոփայությունը վերածում են գիտության առնչությամբ արված սխոլաստիկական սպեկուլյացիաների հավաքածուի։

Գիտական և փիլիսոփայական անդրադարձման կոնցեպցիայի դիալեկտիկամատերիալիստական ըմբռնումը ելնում է նրանից, որ գիտական իմացությունն, ամբողջության մեջ վերցրած, իրենից ներկայացնում է մի շարք կարևոր իմացաբանական ֆունկցիաներ կատարող հետազոտական գործունեության զանազան տիպերի բարդ դիալեկտիկական փոխգործողություն։

Գիտական և փիլիսոփայական անդրադարձը՝ իր ընդհանրական իմաստով, իրականության համապատասխան հատվածի իմացության այնպիսի տեսակ է, որն անբաժան է այդ հատվածների մասին համապատասխան գիտելիքների բովանդակության զարգացումից։ Ավելին, որոշ իմաստով այն մշտապես դուրս է գալիս գիտելիքի համապատասխան բնագավառներում գործառող կոնկրետ կոնցեպտուալ համակարգերի սահմաններից։

Գիտափիլիսոփայական անդրադարձման ընթացքում առաջադրվում և կենսագործվում են հետևյալ նպատակները. առաջին, դիտարկվող պրոցեսների, փորձի տվյալների մեջ մարմնավորվում են այն հասկացական կառույցները, որոնք կապված են էմպիրիկ փաստերի նոր «տեսական մեկնակերպի» (նոր հարացույցի, մտածողության ոճի և այլն) հետ, երկրորդ, այդ վերլուծության հիման վրա իրականացվում է նոր հասկացական կառուցվածքի (տեսության, նրա որևէ հատվածի և այլն) «առարկայականացումը», «նյութականացումը»։ Երրորդ, տրվում է փորձի որոշակի բնագավառի կամ հատուկ գիտական կամ փիլիսոփայական գիտելիքի յուրացման արդյունքների (որոնք անդրադարձման առարկաներն են) քննադատական գնահատականը։

Իմացաբանական վերը նշված գործառնություններն ավելի համարժեք ու լրիվ կերպով են արտացոլում օբյեկտիվ իրականության որոշակի հատվածը կամ ապահովում են նրա մեթոդաբանական և աշխարհայացքային իմաստավորումը։ «Անդրադարձման արդյունքը,— նշում է Վ. Ա. Լեկտորսկին,— այնպիսի տեսական համակարգն է, որը, որոշակի համատեքստում վերցված, որոշ իրական կախվածությունների հարաբերականորեն ճշմարիտ արտացոլումն է և որը, միևնույն ժամանակ, ենթադրում է մի շարք ենթադրություններ, որոշ ոչ ակնհայտ «նախադրյալային» գիտելիք։ Այսպիսով, անդրադարձման հետևանքով գիտելիքը գոյություն ունեցող իր համակարգի սահմաններից դուրս է գալիս և հանգեցնում է նոր գիտելիքի ձևավորմանը։

...Այդպիսի ընթացակարգի հետևանքով իրականացվում է իրականության օբյեկտիվ կախվածությունների ավելի ու ավելի ճշգրիտ արտա-

ցոլում և բուն գիտական տեսությունների բովանդակության և կառուցվածքի ավելի ու ավելի ճշգրիտ վերարտադրություն»[15]։

Պետք է նշել և այն, որ գիտափիլիսոփայական անդրադարձը դիալեկտիկորեն կապված է հիպոթեզների մեթոդի հետ։

Անդրադարձ կատարելով կոնկրետ իմացաբանական իրավիճակի նկատմամբ, նպատակ ունենալով մշակել որոշակի գիտական պրոբլեմ, գիտնականը փորձում է առաջադրված հիպոթեզներից ընտրել առավել անհակասականը (կոնցեպտուալ առումով՝ ճշմարտացի հիպոթեզը), որը համապատասխանում է բնության և հասարակության հիմնարար օրենքներին և իր մեջ ներառում է էմպիրիկ ստուգելիության լավագույն տարբերակը։ Գիտափիլիսոփայական անդրադարձի մեթոդի նման կիրառելիությունը որակապես ընդլայնում է գիտության ու փիլիսոփայության հոգևոր-ինտելեկտուալ նվաճումների խորը իմաստավորման հնարավորությունները։ Այսպես, անդրադարձը ռելյատիվիստական ֆիզիկայի մեթոդաբանական ակունքների նկատմամբ հավաստում է այն փաստը, որ մաթեմատիկական փորձարարության մաքսվելյան մեթոդը հանդիսացավ նոր քայլ օբյեկտիվ արտաքին աշխարհի որակապես նոր օրինաչափությունների բացահայտման գործում։

Առանձնահատուկ պետք է շեշտել և այն փաստը, որ գիտական անդրադարձման մեթոդը լայնորեն կիրառվել է Ա. Էյնշտեյնի կողմից։ Տեսության կոնցեպտուալ ապարատի քննադատական վերլուծությունն Ա. Էյնշտեյնին բերում է ուսումնասիրվող երևույթների նոր տեսական մոդելի կառուցմանը («պարադիգմալ» սխեմայի ձևակերպմանը)։ Սրան անհրաժեշտորեն հետևում է այդ պրոցեսները բացատրող ընդհանուր մաթեմատիկական սկզբունքների ու օրենքների ձևակերպումը։

Կ. Պոպերը առաջ է քաշել մեր մոլորակի տեղադրության և ձևի մասին անտիկ պատկերացումների ծագման հետաքրքիր մի վարկած, որի շրջանակներում առանձնահատուկ կերպով ընդգծվում է փիլիսոփայական անդրադարձման՝ որպես աշխարհի գիտական իմացության մեթոդի դերն ու նշանակությունը։ Հատկանշական է, որ Կ. Պոպերը խոսելով ռացիոնալության, որպես ժամանակակից գիտության առավել հիմնարար սկզբունքներից մեկի, ծագման ակունքների մասին, առանձնացնում է նրա երկու կարևորագույն բաղադրամաս։ Առաջինը վերաբերում է բացատրական ֆունկցիա կատարող տեքստերի (առասպելի, հեքիաթի, ավանդության և այլն) հայտնագործմանը։ Այդ տեքստերը մշակույթին հատուկ համընդհանուր երևույթ են և պատկանում են մարդկային լեզվի հիմնարար ֆունկցիաների թվին։

Երկրորդ բաղադրամասն առասպելների բացատրության առիթով ծագած քննադատության և քննադատական բանավեճի հայտնագործումն է։

Ըստ Կ. Պոպերի, այս բաղադրամասի երևան գալը, ժամանակագրական առումով, վերաբերում է հին հունական դպրության (մատենագրության) հաստատման դարաշրջանին։ Չնայած որ այս պնդումը մենք, ընդհանուր առմամբ, համարում ենք վիճելի, սակայն տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է շարադրման այլ տեսանկյունը՝ փիլիսոփայական անդրադարձման դերը հիմնարար կոսմոլոգիական (տիեզերքի՝ որպես մի միասնական կապակցված ամբողջության) գաղափարների կազմավորման գործում։

Անդրադառնալով այդ հարցին, Կ. Պոպերը նշում է, որ Թալեսը՝ Անաքսիմանդրոսի ուսուցիչն ու Հոնիայի փիլիսոփայական դպրոցի հիմնադիրը, ենթադրություն է արել այն մասին, որ «երկիրը պահպանվում է ջրով, նավի նման լողում է»։[16]

Անաքսիմանդրոսի կողմից արված մտավոր աշխատանքի նշանակությունը այն է, որ նա իր առջև խնդիր դրեց քննադատաբար վերաիմաստավորել և բարելավել այդ առասպելը։

Ընդսմին, այդ խնդրի լուծումն անխուսափելիորեն հանգեցնում է անսահման ետընթացքին («հոռի անսահմանությանը»), քանի որ եթե երկիրը պահպանում է օվկիանոսը, ապա ծագում է նրա տեղադրության և անշարժության բացատրության պրոբլեմը և այլն։

«Իմ ենթադրության համաձայն,— գրում է Կ. Պոպերը,— փորձելով դուրս գալու ելք փնտրել այդ խորը փակուղուց, որից ինչպես թվում էր, անկարող է դուրս բերել և ոչ մի այլընտրանքային բացատրություն, Անաքսիմանդրոսը վերհիշել է մի հատված, որում Հեսիոդոսը մշակում է «Իլիականից» վերցված մի գաղափար։ Այդ հատվածում ասվում է, որ Տարտարոսը երկրի տակ նույնքան հեռավորության վրա է գտնվում, ինչպես և Ուրանը կամ երկինքը նրա վրա... Դա Անաքսիմանդրոսին լիովին կարող էր այն մտքին հանգեցնել, որ կարելի է պատկերել աշխարհի դիագրամը՝ կենտրոնում երկրի և նրան, կարծես թե, ծածկող կիսագնդի՝ երկնակամարի հետ միասին»[17]։

Կ. Պոպերը գտնում է, որ այսպես դրվել են նոր քննադատական ավանդույթի հիմքերը, ավանդույթ, որի նշանակությունն այն է, որ քննադատաբար վերաիմաստավորվում են բացատրողական ֆունկցիա կատարող հին առասպելները և դրա հիման վրա ստեղծվում են իրականության որոշակի հատվածի (կամ, ամբողջությամբ վերցրած, աշխարհի)

բացատրության բարելավված տարբերակներ։ Այս փաստը մեծ նշանակություն է ունեցել գիտության, նրա հետազոտական հնարքների ու մեթոդների զինանոցի հարստացման ու զարգացման համար։

Ըստ Կ. Պոպերի գիտափիլիսոփայական անդրադարձը կարող է առավելագույնս արդասաբեր լինել միայն այն դեպքում, եթե այդ պրոցեսի մեջ ներգրավված կողմերը ելնում են տարբեր ելակետային տեսական դիրքորոշումներից։ Դրան հակառակ, տրամաբանական էմպիրիզմի ներկայացուցիչները պնդում են, որ բանական և արդասաբեր բանավեճն անհնար է, եթե նրա մասնակիցները ելնում են տարբեր կոնցեպտուալ համակարգերից։ Այսպիսի մեթոդաբանական դիրքորոշումը Կ. Պոպերն անվանում է «կոնցեպտուալ հիմնակմախքի առասպել»[18]։ Խոսքն այն մասին է, որ նոր գիտական հարացույցի ընդունման ընթացակարգն անխզելիորեն կապված է այդ նոր հարացույցի և նրա այլընտրանքային, նախ և առաջ, հին հարացույցի, փոխհարաբերության հետ։

Հին հարացույցը գիտափիլիսոփայական անդրադարձման առարկա է դառնում։ Նոր կոնցեպտուալ կառուցվածքի կազմավորումը ենթարկված է դիալեկտիկական բացատրման օրենքին։ Հնից պահպանվում է միայն այն, ինչն աշխարհի մասին եղած նոր պատկերացումների համատեքստում ունի օբյեկտիվ բովանդակություն։

Տեսական անդրադարձման ընթացքում հին կոնցեպտուալ կառույցների իմաստային կապերի վերակառուցումը ոչ այլ ինչ է, եթե ոչ դիալեկտիկական «վերառում», որը իմացության զարգացման պրոցեսի բնորոշ գծերից է։

Այսպիսով, գիտափիլիսոփայական անդրադարձումը սերտորեն կապված է գիտելիքի զարգացման հետ, և այդպիսի զարգացման յուրաքանչյուր փուլ ենթադրում է հին կոնցեպտուալ հիմնակմախքի խորացում ընդլայնում (որոշ դեպքերում՝ նաև ոչնչացում)։

Հին կոնցեպտուալ կառուցվածքի նկատմամբ գիտափիլիսոփայական անդրադարձը ենթադրում է գիտելիքի որոշակիորեն հիմնավորված ու կայունացված շերտի գոյություն, որը հանդիսանում է գիտության հասկացական կառուցվածքի և աշխարհայացքի գիտական և տրամաբանական-փիլիսոփայական վերլուծության միջոց։

Նկատի ունենալով այս հանգամանքը, Թ. Կունը նշում է, որ հին հարացույցն ավելի վաղ չի վերանում, քան առաջ է գալիս նորը[19]։

Ընդ որում, ակնհայտ է, որ նոր հարացույցը միանգամից՝ «պատրաստի ձևով» երևան չի գալիս։ Դրան նախորդում է բազմափուլ գիտափիլիսոփայական անդրադարձ, որն օրգանապես կապված է իրականու-

թյան տվյալ հատվածն ուսումնասիրող գիտնականի էմպիրիկ հետազոտությունների հետ։ «Անդրադարձման յուրաքանչյուր ակտ,— գրում է Վ. Ա. Լեկտորսկին,— իմաստավորման, ըմբռնման ակտ է։ Վերջինս, նախ և առաջ, ենթադրում է ըմբռնման որոշակի միջոցներ, իմաստային կապերի որոշ շրջանակ։ Այդ շրջանակից դուրս անհնար է և անդրադարձումը... Անդրադարձման միջոցը, նրա իմաստային շրջանակն ինքը կարող է դառնալ ռեֆլեկտիվ վերլուծության առարկա, բայց դրա համար այն պետք է իմաստավորվի այլ իմաստային շրջանակի օգնությամբ, որը նոր համատեքստում կմնա չանդրադարձված... Ուշադրություն դարձնենք հետևյալ կարևոր հանգամանքի վրա։ Այն դեպքում, երբ ոչ ակնհայտ գիտելիքը վերածվում է ակնհայտի, այսինքն՝ դառնում է անդրադարձման առարկա, ենթարկվում է որոշակի փոփոխությունների։

Օբյեկտիվավորված գիտելիքի համակարգի նկատմամբ տեսական անդրադարձումը նշանակում է նրա մասնատում, մի շարք ենթադրությունների ու իդեալականացումների ձևավորում և դրա հետ մեկտեղ, դա առանձնապես կարևոր է ընդգծել, նշանակում է նաև բուն այդ գիտելիքի ճշգրտում, հրաժարում ոչ ակնհայտորեն ընդունված նախադրյալներից (հատկապես գիտելիքի մի շարք նախադրյալների վերանայման անհրաժեշտությամբ է թելադրվում անդրադարձման ընթացակարգը)։ Այն, ինչը նախկինում թվում էր համոզիչ, ինտուիտիվ կերպով հասկանալի ու պարզ, անդրադարձման շնորհիվ կարող է բավականաչափ բարդ և հաճախ՝ պրոբլեմատիկ, իսկ, որոշ դեպքերում, պարզապես սխալ լինել»[20]։ Ընդսմին, ինչպես արդարացիորեն ընդգծում է Վ. Ա. Լեկտորսկին, հարկ է մշտապես հիշել, որ նոր կոնցեպտուալ կառույցի ընդունման վճռորոշ գործոնը ոչ թե տեսական գիտելիքի նկատմամբ տեսական անդրադարձումն է, այլ շրջապատող աշխարհի իրական օբյեկտների ուսումնասիրությունը։ Այս առումով գիտելիքի զարգացման որոշ պրոցեսների քննարկումն ամենևին չի փոխում իրապես գոյություն ունեցող առարկաները, այլ մեր ուշադրությունը բևեռում է այն հանգամանքի վրա, որ առանձնահատուկ հարաբերություններ են ձևավորվում անդրադարձման և գիտելիքի անդրադարձվող շերտի միջև։ «Անդրադարձման շնորհիվ նրա առարկան՝ գիտելիքների համակարգը, ոչ միայն նոր հարաբերությունների մեջ է դրվում, այլև վերակառուցվում ու վերակազմակերպվում է... Հետազոտության պրոցեսն անխզելիորեն կապվում է բուն ուսումնասիրվող առարկայի ստեղծագործական վերափոխման պրոցեսի հետ»[21]։

Գիտափիլիսոփայական անդրադարձման կոնցեպցիայի էության, իմացաբանական ֆունկցիաների վերոհիշյալ ողջ վերլուծությունը աներկ-

բայորեն հավաստում է, որ գիտական գիտելիքի առաջընթաց զարգացումն անխուսափելիորեն ներազդում է ոչ միայն գիտափիլիսոփայական անդրադարձման կոնցեպցիայի էության, նրա տրամաբանական-իմացաբանական ֆունկցիաների, այլև նրա փիլիսոփայական հիմքերի վրա, նախանշում դրանց հետագա զարգացման հեռանկարները։ Այդ վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ գիտափիլիսոփայական անդրադարձման կոնցեպցիայի արմատական փոխակերպումներն անհնար է համարժեք կերպով բացատրել՝ առանց հենվելու մարքս-լենինյան իմացության տեսության, նրա հիմնարար մեթոդաբանական սկզբունքների վրա։

А. М. АКОПЯН

НАУЧНО-ФИЛОСОФСКАЯ РЕФЛЕКСИЯ И ПРОБЛЕМА КОНЦЕПТУАЛИЗАЦИИ ЗНАНИЯ

Резюме

Разработка проблемы концептуализации знания включает в себя ряд аспектов, детальный анализ которых требует привлечения большого комплекса логико-методологических вопросов. В настоящей статье дается краткий анализ роли научно-философской рефлексии в концептуализации знания.

Научно-философская рефлексия — это исследовательская процедура, осуществляемая ученым над разнообразными идеализированными (идеальными) объектами, возникающими в его сознании на различных стадиях исследования: на стадии прямого наблюдения за поведением изучаемого явления, на стадии первичной обработки результатов эмпирического изучения и осмысления его особенностей; на стадии теоретического обобщения эмпирических корреляций, закономерностей и моделей изучаемого явления; на стадии генетически-конструктивного построения все более общих (спекулятивных) его моделей. В этом смысле научная рефлексия трактуется как «критика и анализ теоретического знания, проводимые на основе применения и уяснения тех методов и приемов, которые свойственны данной области научного исследования, а философская рефлексия — осознание и осмысление предельных оснований бытия и мышления, человеческой культуры в целом».

В домарксовских, также как и в некоторых современных идеалистических концепциях метод рефлексии предстает не как развивающийся метод научного исследования мира, а как философско-религиозная догма призванная обнаруживать духовные, «божественные» основания всякого возможного опыта. Согласно же ново-

му взгляду, развиваемому рядом советских философов, научно-философская рефлексия представляется необходимым компонентом концептуального обеспечения развивающегося научного знания, создающая интеллектуальные условия для «теоретического моделирования» новых познавательных ситуаций. Основная идея заключается в том, что реализация познавательных функций научно-философской рефлексии целенаправлена на развитие и совершенствование концептуального аппарата науки вместе с выявлением и критическим истолкованием понятийных структур, входящих в основу фундаментальных теорий.

[1] *Տե՛ս* **В. А. Лекторский**, Субъект, объект, познание. М., 1980; **Н. Н. Моисеев**. Математика ставит эксперимент. М., 1979; **М. В. Мостепаненко**, Философия и методы научного познания. М., 1972; **В. С. Степин, А. Н. Елсуков**, Методы научного познания. Минск, 1974; **А. В. Славин**, Проблема возникновения нового знания. М., 1976, **В. С. Швырев**, Теоретическое и эмпирическое в научном познании. М., 1978. **В. А. Штофф**, Проблемы методологии научного познания. М., 1978.

[2] Рефлексия. Философский энциклопедический словарь. М., 1983, *էջ* 579:

[3] И. Кант, Соч., т. 3. М., 1964, *էջ* 314:

[4] *Նույն տեղում։*

[5] *Նույն տեղում, էջ 326։*

[6] **А. Эйнштейн**, Собр. научных трудов. М., 1966, т. 2, *էջ* 279:

[7] *Տե՛ս* **К. Маркс, Ф. Энгельс**. Соч., т. 46, ч. 1, *էջ* 36—38:

[8] *Տե՛ս* **Ֆ. Էնգելս**, *Բնության դիալեկտիկա, Երևան, 1969, էջ 229—233, 246։*

[9] *Տե՛ս* **Վ. Ի. Լենին**, Նկ, հ. 29, *էջ* 186, 248, 278, 365:

[10] *Տե՛ս նույն տեղում, էջ 183—184։*

[11] *Տե՛ս նույն տեղում, էջ 275, 405։*

[12] **Г. А. Брутян**, Концептуализация философского знания. — «Вопросы философии», 1980, № 11, *էջ* 95:

[13] *Տե՛ս նույն տեղում։*

[14] **В. С. Швырев**, *Նշվ. աշխ., էջ 7։*

[15] **В. А. Лекторский**, *Նշվ. աշխ., էջ 259։*

[16] **К. Поппер**, Логика и рост научного знания. М., 1983, *էջ* 567:

[17] *Նույն տեղում, էջ 568։*

[18] *Նույն տեղում, էջ 558։*

[19] *Տե՛ս* **Т. Кун**, Структура научных революций. М., 1977.

[20] **В. А. Лекторский**, *Նշվ. աշխ., էջ 259։*

[21] *Նույն տեղում, էջ 60։*